ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ԱԿՏ

26.10.2012թ. գ.ՂՈՒԿԱՍԱՎԱՆ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ - ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

2. ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ - ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ, ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ, ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 30.01.2012Թ.Ի N 11-Ա ՀՐԱՄԱՆ,

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 19.10.2012 Թ.- Ի N 170 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

3. ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ՝

Լալայան Ալինա _ Խմբի ղեկավար / ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Խաչատրյան Լեոնիկ _ Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Գրիգորյան Վարուժան _ Իրավաբանական բաժնի պետ

Հակոբյան Հրայր _ Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ

Տերտերյան Հայկազ _ Գյուղատնտեսության բաժնի պետ

Պողոսյան Գագիկ – Ընտանիքի , կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Դավթյան Մանվել - Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Նազարյան Սեյրան _ Կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

Թարվերդյան Ռաֆիկ _ Ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Հակոբյան Արմենակ _ Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Հակոբյան Լիլիթ _ Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ

Ալոյան Վիոլետա - Կրթության,մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ

Մանուկյան Մովսես _ Ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ

Միսակյան Ոսկան _ Հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ

4. ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ՝ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

6. ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 22.10.2012Թ.—24.10.2012Թ.

7. ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԳՐԿՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ՝ 2010 - 2012Թ.Թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 259.07 հա, այդ թվում համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 32.14հա, որից՝ 7.56 հա վարելահող և 24.59 հա այլ հողեր:

1. Համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 2010թ-ին վարձակալության է տրամադրվել 22.06 հա, 1000.0 հազար դրամ պլանային վարձավճարի դիմաց գանձվել է 1070.7 հազար դրամ, իսկ 2011թ-ին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալության է տրամադրվել 22.06 հա, 1000.0 հազար դրամ պլանային վարձավճարի դիմաց գանձվել է 882.2 հազար դրամ, կամ պակաս է գանձվել 117.8 հազար դրամ, քանի որ հողամասերը օտարվել է աճուրդով: 2012թ-ին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալության է տրամադրվել 7.56 հա, 530.0 հազար դրամ պլանային վարձավճարից առ 22.10.2012թ գանձվել է 184.5 հազար դրամ:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 24.59 հա այլ հողերը հիմնականում անօգտագործելի, և դաշտամիջյան ճանապարհներ են:

Համայնքում 2010թ-ին հողամասերի աճուրդ-վաճառք չի կատարվել, 2011թ.-ին օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի 4 աճուրդ-վաճառք, օտարվել է թվով 65 տնամերձ հողամասեր, որի ընդհանուր մակերեսը կազմել է 5.38 հա, օտարման գումարը կազմել է 69010.9 հազար դրամ, իսկ 2012թ մայիսի 7-ին կազմակերպված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառքում օտարվել է 0.1 հա գյուղ.այլ հողամաս, օտարման գումարը կազմել է 50.75 հազար դրամ:

3. Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընթացքում նպատակային նշանակության փոփոխություններ չկան:

4. Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողամասերի ապօրինի հողօգտագործման դեպքեր չկան:

5. Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը կատարվել է սահմանված կարգով, ըստ որի կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

6. Համայնքի վարչական սահմաններում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանումը կատարվում է համայնքի ղեկավարի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Ղուկասավան համայնքը ունի 1.1կմ համայնքային ենթակայության ավտոճանապարհ: Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կապավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանում և շահագործում չի կազմակերպվել:

2. Համայնքը չունի ներհամայնքային հասարակական տրանսպորտ, համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ:

3. Իրավասու մարմինների ներկայացմամբ, համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության շանների տեղակայման ու հանման հաստատում և թույլտրում չի տրվել:

2010թ. 4032.8 հազ. դրամ գումարով կատարվել է 7 և12-րդ փողոցների բարելավման աշխատանքներ:

2011թ. 1914.9 հազ. դրամ գումարով կատարվել է 9 և 15-րդ փողոցների, .1410.0 հազ. դրամ գումարով 14-դ փողոցի բարելավման աշխատանքներ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

010թ. համայնքի տարածքում գործել են 6 մթերային խանութ, 1 հանրային սնունդ: 2010թ. համայնքի բյուջեի կամտային մասում տեղական տուրքերի մասով պլանավորվել է 6 մթերային խանութներ՝ 72.0 հազ. դրամ գելից խմիչքի վաճառքի թույլտվության համար / տարեկան դրույքաչափը սահմանվել է 12.0 հազ.դրամ/ և 2,0 հազ. դրամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար / տարեկան դրույքաչափը սահմանվել է 12.0 հազ. դրամ/: Չի պլանավորվել հանրային սննդի օբյեկտը՝ 24.0 հազ.դրամ: 2010թ. համայնքի բյուջեի կատարողականում առկա է 144.0 հազ դրամ տեղական տուրք ոգելից խմիչքների և խախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար: Պակաս է գանձվել 24.0 հազ. դրամ հանրային սնդի օբյեկտի համար:

2011թ. համայնքի տարածքում գործել են 8 մթերային խանութ, 1 հանրային սնդի օբյեկտ: 2011թ. համայնքի բյուջեի եկամտային մասում տեղական տուրքերի մասով պլանավորվել է 6 մթերային խանութներ՝ 72.0 հազ. դրամ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար /տարեկան դրույքաչափը սահմանվել է 12.0 հազ.դրամ/ և 72,0 հազ. դրամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար / տարեկան դրույքաչափը սահմանվել է 12.0 հազ. դրամ/: Հանրային սննդի օբյեկտը չի պլանավորվել: 2011թ. համայնքի բյուջեի կատարողականում առկա է 186.0 հազ. դրամ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ 2 խանութ բացվել են տարվա կեսից: Չի գանձվել 24.0 հազ. դրմ տեղական տուրք հանրային սննդի օբյեկտի համար:

2012թ. համայնքի տարածքում գործում են 8 մթերային խանութ, 1 հանրային սննդի օբյեկտ: 2012թ. համայնքի բյուջեի եկամտային մասում տեղական տուրքերի մասով պլանավորվել է 8 մթերային խանութներ՝ 96.0 հազ. դրամ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար / տարեկան դրույքաչափը սահմանվել է 112.0 հազ.դրամ/ և 96,0 հազ. դրամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար /տարեկան դրույքաչափը սահմանվել է 12.0 հազ. դրամ/, չի պլանավորվել հանրային սննդի օբյեկտը՝ 24.0 հազ. դրամ:

Առ այսօր գանձվել է 186.0 հազ. դրամ՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար /1 խանութ փակվել է 3-րդ եռամսյակում, պակաս է գանձվել 24.0 հազ. դրամ՝ հանրային սննդի համար:

Համայնքի ղեկավարի կողմից տրվող համապատասխան վաճառքի թույլտվություններ տալու գործընթացի ուսումնասիրությունից պարզվեց՝

- ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվությունները հանրային ներկայացված հայտերը սահմանված կարգով մուտքագրված չեն գյուղապետարանում,
- ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվությունները սահմանված կարգով հաշվառված չեն գյուղապետարանում:

Համայնքի ղեկավարի կողմից չի իրականացվել ՀՀ ՏԻՄ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի, "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի 17.1 հոդվածի , "Վարչական իրավախախտումների վերաբերյալ" ՀՀ օրենսգրքի 169.16 հոդվածի պահանջները.

Այսպիսով 2010-2012թթ. ընթացքում համայնքի բյուջե պակաս է մուտք եղել 72.0 հազ. դրամ տեղական տուրք՝ 2010թ, համար 24.0 հազ. դրամ, 2011թ. համար՝ 24.0 հազ. դրամ, 2012թ. համար՝ 24.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

Մարզպետարան ներկայացվում է առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության վերաբերյալ պարտադիր եռամսյակային հաշվետվություններ:

Այսպիսով համայնքի ղեկավարը առևտրի և ծառայությունների ոլորտում թերի է իրականացնում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունները:

Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով ավագանու հաստատման է ներկայացրել

համայնքի զարգացման քառամյա ծրագիրը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

20. Օրենքով կամ կառավարության սահմանած կարգով համայնքի բնապահպանական, գյուղատնտեսական կադաստրների վարում:

Ղուկասավան համայնքի վարչական տարածքը կազմում է 259 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր 127 հա, այդ թվում վարելահող 101 հա, որը հիմնականում կարտոֆիլ է. մշակվում, բազմամյա տնկարքներ չեն մշակվում: Համայնքում անմշակ տարածքներ չկան:

Հողերը հիմնականում 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգի են:

Համայնքի ոռոգումը սպասարկում է "Մասիս" ՋՕԸ-ն Հրազդան գետից ինքնահոս եղանակով: 2010-2011 թթ համայնքում երրորդ կարգի ջրանցքների անցկացման կամ վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել:

Անանսապահության բնագավառում անասնագլխաքանակի աճ չի նկատվել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասնում է 335-ի, որից կովեր 94 գլուխ մանր եղջերավոր անասուններինը 35 գլուխ ոչխարներ:

21. Օրենքով կամ կառավարության սահմանված կարգով քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար միջոցառումների ձեռնարկում:

Անասնաբույժը կատարել է պետության կողմից պատվիրակված բոլոր հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխման ուղղությամբ:

2012 թվականին հայտնաբերվել է կարտոֆիլի ցեց վնասատուն, որը զգալի վնաս է հասցրել գյուղացիական տնտեսությունների և անհրաժեշտ է խիստ միջոցներ ձեռնարկել վարակը կանխելու համար:

Համայնքում որևէ բնապահպանական ծրագիր չի իրականացվել:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 1986

Համայնքում գործում է բուժակմանկաբարձական կետ՝ <<Դարակերտի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՓԲԸ-ի կազմում: Տեղակայված է նախկին դպրոցի շենքում, պայմաններն անբավարար են, չկա խեմու ջրագիծ, գազ և ջեռուցում: ԲՄԿ-ում մշտապես աշխատում են երկու բուժքույր, շաբաթը մեկ օր կամ ըստ անհրաժեշտության՝ նաև բժիշկը: ԲՄԿ-ն ունի ուշադրության խիստ կարիք, անհրաժեշտ է բարելավել շենքային պայմանները և ապահովել անհրաժեշտ կահավորանքով:

Համայնքին խմելու ջուր է մատակարարում <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի <<Կենտրոն-արևմտյան>> մասնաճյուղի <<Մասիս-գյուղեր>> տեղամասը՝ Սիսի ջրամբարից, ժամը 7^{00}-ից մինչև 23^{00}-ը: 2011 թվականին նորացվել է մեկ փողոցի ջրագիծ:

Աղբահանությունը համայնքում իրականացվում է շաբաթական երկու անգամ, սեփական կցասայլակով: Աղբավայրը գտնվում է համայնքից 1.5 կմ հեռավորության վրա, հողերի օգտագործման սխեմայով սահմանված վայրում, զբաղեցնում է 1900 քմ տարածք: Աղբը այրվում է և ծածկվում է հողաշերտով: Համայնքի տարածքում ընդհանուր սանիտարական վիճակը բավարար է:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Վարչական վերահսկողության ծրագրի շրջանակներում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը 2012թ. հոկտեմբերի 22-ից 24-ը ուսումնասիրություն է իրականացրել Ղուկասվան համայնքում՝ Տեղական ինքնակառավարման մասին << օրենքի 33-րդ հոդվածի 2-1 կետի , << Ընտանեկան օրենսգրքի 109 հոդվածի և << կառավարության 24.02.2011թ. 164-Ն որոշմամբ հաստատված <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> պահանջների կատարման համաձայն: Համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը 03.05.2011թ. համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվել է համայնքի ավագանու կողմից: Ավագանու որոշմամբ հանձնաժողովի անհատական կազմից սահմանվել են հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար: << կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշման պահանջների համաձայն համայնքի ղեկավարի որոշմամբ հանձնաժողովի քարտուղարի պաշտոնի անձնագրում կատարվել է կանոնադրությամբ նախատեսված գործառույթներին համապատասխան փոփոխություն:

Համայնքում չի հայտնաբերվել երեխաների ծննդյան փաստի օրենքով սահմանված չգրանցման, թրաֆիկինգի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և կրթությունից դուրս մնացած, առանց ծնողական խնամքի մնացած և դրանց թվին պատկանող երեխաներ : Առաջարկվում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի աշադրությունը հրավիրել

1.Աշխատակազմում գործավարության որակի բարելավման վրա.

2. Ավագանու և համայնքի ղեկավարի ընդունվող իրավական ակտերը,,Իրավական ակտերի մասին" << օրենքի պահանջներին համապատասխանեցնելու վրա:

Լալայան Ալինա

Խաչատրյան Լեռնիկ

Գրիգորյան Վարուժան

Հակոբյան Հրայր

Տերտերյան Հայկազ

Պողոսյան Գագիկ

Դավթյան Մանվել

Նազարյան Սեյրան

Թարվերդյան Ռաֆիկ

Հակոբյան Արմենակ

Հակոբյան Լիլիթ

Ալոյան Վիոլետա

Մանուկյան Մովսես

Միսակյան Ոսկան

Համայնքի ղեկավար՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ